ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ---------- 2018թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N87-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկից «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրված 33.5քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկից «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրված 33.5 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը:

Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 25-ի հ.423-Ա որոշման հիման վրա քննարկվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 1-ը ժամկետով տրամադրվել էր կազմակերպությանը և վերջինիս հետ կնքվել էր գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որի հիման վրա իրավունքը ստացել է պետական գրանցում /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.23122015-01-0219 վկայական/:

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը ստեղծվել է 2008 թվականին, այն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է: Կազմակերպության հիմնական նպատակն է զանգվածային լրատվական միջոցների ընդհանուր և թեմատիկ դիտարկումները, վերլուծությունները, ինչպես նաև քաղաքացիների տեղեկացված լինելու իրավունքի հետ առնչվող խնդիրների ուսումնասիրությունները:

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է ուսումնասիրություններ՝ ուղղված պետական կառույցների թափանցիկության, տեղեկատվության մատչելիության, տեղեկատվության հավաքագրման և տարածման գործընթացների հետ:

Կազմակերպությունը զբաղվում է հայաստանյան և արտասահմանյան լրատվական ռեսուրսների ուսումնասիրություններով, տեղեկատվական հոսքերի վերլուծություններով, հայանպաստ տեղեկատվությունը միջազգային առաջատար լրատվական ռեսուրսներում առաջ մղելով և տարածելով: Կազմակերպությունը իրականացնում է նաև հայկական լրատվական դաշտում տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված անհրաժեշտ տեխնիկական միջոցառումներ:

Հաշվի առնելով կազմակերպության գործունեության ուղղվածությունը, ինչպես նաև համանման դեպքերում ձևավորված մոտեցումը՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ